

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՎԱՐՔԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մարդկանց վարքի խախտումները, դրանց պատճառների հայտնաբերումը և հաղթահարման միջոցների որոնումը եղել և մնում է որպես հոգեբանամանկավարժական և բժշկական գիտությունների ուսումնասիրության կարևոր հիմնահարց: Գաղտնիք չէ, որ այսօր էլ երեխաների, դեռահասների, պատանիների և մույնիսկ երիտասարդների վարքում դրսևորվում են «հասարակական բարոյականությունը» (Մակարենկո) անհարիր արարքներ, վարքի այլազան շեղումներ: Գիտության կողմից բացահայտվել ու տիպաբանվել են դեռահասների վարքի շեղման որոշ առանձնահատկություններ ու յուրահատկություններ, որոնք հաշվի պիտի առնեն ծնողներն ու մանկավարժները դեռահասի վարքի տարաբնույթ շեղումները հաղթահարելիս:

Փորձենք սույն հոդվածում համառոտակի բնութագրել դեռահասների վարքի շեղման մի շարք տեսակներ և նախանշել դրանք հաղթահարելու որոշ ուղիներ՝ մանկավարժաբժշկական մեթոդական բնույթի առաջարկություններով հանդերձ: Այդ հոժարին խնդիրը լուծելու նպատակով հիմք ենք ընդունել արտերկրում, նախկին խորհրդային միությունում և հատկապես մեր հանրապետությունում կատարված ուսումնասիրությունները, ինչպես նաև մեր բազմամյա մանկավարժաբժշկական բնույթի դիտարկումները:

Չետագոտությունների գերակշիռ մասը եղել են նկարագրական. առանձնացվել են վարքի շեղման մի քանի տեսակներ, հատկանշական համարելով կենսաբանաժառանգական, հոգեբանական և բժշկական բնույթի շեղումները:

Վարքի շեղման կենսաբանական գործոններից է լայն տարածում գտած ժառանգական (գենետիկական) գործոնը, որը դիտվում է որպես անոմալիայի ախտածին երևույթ: Վարքի շեղման ժառանգական գործոնը կապված է ծնողներից եկող անմիջական կամ միջնորդավորված ազդեցության և այլ գործոնների հետ (ալկոհոլ, սեռական հիվանդություններ և այլն): Այն դիտվում է որպես անոմալիայի ախտածին երևույթ, որի բնութագրության մեջ ավելի գերակշիռը բժշկահոգեբանական մոտեցումներն են եղել:

Կենսաբանական կամ ժառանգական գործոնի առկայության դեպքում տեղի են ունենում երեխայի զլխուղեղի նյարդաբանական ախտահարումներ: Այդ ախտահարումների մանրակրկիտ հետազոտությունները առավելապես արդյունավետ են եղել կոտսեր դպրոցականների շրջանում:

Դեռահասները նույնպես ուսուցման գործընթացում արտասովոր վարքի շեղման դրսևորումներ են ունենում և անտեղյակ ուսուցիչը, մանկավարժը,

դաստիարակը սկզբնական շրջանում տազնապալի վիճակ է ունենում: Նրանք հաճախ պատժում են երեխաներին ու դեռահասներին: Սինչդեռ ժամանակակից գիտամանկավարժական մոտեցումները առաջադրում են դեռահասի մեջ դրսևորվող վարքի շեղման նկատելի երևույթների նկատմամբ ցուցաբերել ավելի հետևողական վերաբերմունք, կատարել բժշկամանկավարժահոգեբանական հետազոտություն, որի ընթացքում հնարավոր կլինի բացահայտել դեռահասի ծնողների կենսաբանաժառանգական, բժշկական, հոգեբանական, սոցիալական և մտավոր հասունության մակարդակները:՝ Օրինակ, պարզվել է, որ կենսաբանական գործոնների մեջ կարևոր դեր է խաղում հոգեախտաբանական և մանկավարժաբժշկական մոտեցումը, բացահայտվել է և գիտական շրջանառության մեջ է մտել հնՖանտիզմ (իմա՝ մանկամտություն) կոչվող հասկացությունը:

Դեռահասների վարքի շեղումները ոմանք պայմանավորում են նրանց «սեռական հասունացմամբ», մույնիսկ նրանց վերագրելով առաջին սիոռ զգացմունքը: Սինչդեռ տարիքային հոգեբանության մեջ իրավացիորեն «առաջին սիոռ» տարիք է համարվում պատանեկությունը կամ վաղ երիտասարդությունը: Այդ կապակցությամբ հոգեբան Վ.Ա.Կրուտեցկին գրում է. «Առաջին անգամ ավագ դպրոցական տարիքում հանդես է գալիս հատուկ զգացմունք՝ սեռը: Սա բոլորովին նոր հոգեկան վիճակ է դպրոցականի կյանքում, որոշ չկար դեռահասի մոտ: Դեռահասի վերաբերմամբ ավելի ճիշտ կլինի խոսել անձնական համակրանքի, հրապուրանքի, մտերմության... մասին, բայց սերը որպես խոր, ուժեղ, գործուն զգացմունք առաջանում է միայն պատանեկության տարիքում»:

Վարքի որոշ շեղումներ կապված են աքսելերացիայի հետ: Մանկավարժահոգեբանական գրականության մեջ լայն տարածում ունի աքսելերացիա հասկացությունը: Աքսելերացիան առաջին անգամ գիտության կողմից քննախույզ ուշադրության է արժանացել անցյալ դարի առաջին կեսին քաղաքային բնակչության բարեկեցիկ խավի շրջանում, իսկ երկրորդ կեսին այն նկատելի էր գրեթե բոլոր խավերի շրջանում: Դեռահասի վարքի որոշ շեղումներ կապված է նրա մտավոր և ֆիզիկական արագ զարգացման (իմա՝ աքսելերացիա) հետ: Օրինակ, իրեն հասուն զգալով տղա դեռահասը կարող է դիմել ծխախոտին, խմիչքին և այլն:

Աքսելերացիան նկատելի է նաև սեռական հասունության ոլորտում: Աքսելերացիայի առավել անբարենպաստ դրսևորում է նկատվում նրա հատուկ մի արտահայտվածությունը, որը կոչվում է հնտենսիֆիկացիա: Այդ երևույթը

* Դեռահաս տղաների տարիքային-հոգեբանական և բնախոսական առանձնահատկությունների մասին տես ուսուցիչներին հասցեագրված «Տղա-դեռահաս-պատանի» ծեռնարկը (տես «Գրականության» ցանկը...-39):

¹ Վ.Ա.Կրուտեցկի, Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Երևան, «Լույս» հր., 1976, էջ 225:

արտահայտվում է նաև սեռական հասունացման սկզբում և շատ արագ զարգացման թափ ունի (եթե անցյալում դա տեսնում էինք 12-13 տարեկանում, ապա ներկայումս այն ընդգրկում է նույնիսկ 9-10 տարեկանը):

Վերջին շրջանում դիտվում է նաև, որ արսելերացիայի որոշ դրսևորումներ կամ անկում են ունենում, կամ վերափոխվում են այլ ձևերի, դրսևորումների (որը կապված է արտերկրյա տեղեկատվության, նորածնության, արվեստի տարբեր տեսակների, մասնավորապես կինոյի, հեռուստահաղորդումների երաժշտության, պարի և այլ գործոնների հետ):

Վարքի շեղումներից է նաև հնֆանտիզմը: Ինֆանտիլիզմը մի երևույթ է, որը արտահայտվում է անձի տարբեր տարիքային փուլերում, գործունեության տարբեր ոլորտներում, և այն իմաստային առումով գործածվում է որպես մանկամտություն: Ինֆանտիլ դեռահասները իրենց հասակակիցները շրջանում գտնվում են շատ դժվար կացության մեջ (իրենց հասակակիցները բնականոն զարգացում ունեն, իսկ իրենց «հետ են մնում բնականոն զարգացման ընթացքից: Ինֆանտիլիզմի պատճառները տարբեր են, առավելապես այն առաջանում է մարմնական, վարակիչ հիվանդությունների, և, հատկապես, ոչ ճիշտ դաստիարակության հետևանքով:

Վերջին շրջանի գիտամանկավարժական հոգեբանական նոր մոտեցումները արսելերագիան և հնֆանտիզմը դիտում են որպես փոխադարձ պայմանավորված, ինչպես բևեռային, այնպես էլ յուրօրինակ տվյալ ժամանակաշրջանի բնորոշ սոցիալհոգեբանական և կենսաբանաբժշկական հատկանիշների արտահայտվածություն: Ինֆանտիլիզմի պատճառները տարբեր են, առավելապես այն արտահայտվում է մարմնական, վարակիչ հիվանդությունների, և հատկապես ոչ ճիշտ դաստիարակության հետևանքով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռահասների վարքի խախտման կամ շեղման պատճառ կարող են դառնալ նրանց ընկեռալի որոշ հաղաթերություններ ու հոգեբանական առանձնահատկություններ: Դեռահաս տարիքի հոգեբանական առանձնահատկություններից մեկը կապված է «դեռահասային բարդույթ»-ի հետ, որը պայմանավորված է նաև վարքի խախտման սեռատարիքային ճգնաժամով, որ կոչվում է պուբերտագիա: Դեռահասային այդ բարդույթը ներառում է ինչպես ներզգացական, այնպես էլ արտաքին գործոններ: Օրինակ, այս շրջանում է, որ աղքիկը ձգտում է ցույց տալ օրիորդական բոլոր նրբերանգները, փորձելով ուշադրություն գրավել շրջապատում: Նա հիվանդագին է ընդունում ընտանիքում հատկապես մոր կողմից արված դիտողությունները հագուստի ձևի, սանրվածքի, շպարանքի և այլ տարիքին անհամապատասխան արդուզարդի նկատմամբ:

* Դեռահաս աղքկա տարիքային-հոգեբանական և բնախոսական առանձնահատկությունների մասին տես նաև ուսուցիչներին հասցեագրված «Աղջնակ-դեռահաս-աղքիկ» ձեռնարկը (տես «Գրականության» ցանկը).- 34:

Կամ տղան հզուում է նմանվել հայտուն տղանարդուն, տանը ինքնուրունութեան սուր արտահայտման նիւտում է նկատուիւմ, բակում փորձում է հեղինակութիւն ձեռք բերել, պայքարում է այլ տղաների հետ կազմել աւանս (միութիւն դաշինք) և ստեղծել ուժեղ հեղինակութիւն (լիդերութեան հզուում):

Պուրերտագիւն (հզնաժամային) շրջանը իր հետ բերում է նաև հեղինակութեան և սեքսուալ հզնաժամ: Հեղինակութեան հզնաժամը արտահայտուիւմ է որպէս բարդութիւն հետևանք, որպէս հոր նկատմամբ որդու բողոք: հզնաժամային դրսևորումների ծայրահեղ արտահայտութիւնն է ընտանիքից փախուստը և թափառաշրջիկութեան անցնելը: հզնաժամային փուլերի հետևանքներից է հոգեկան ընկճածութիւնը, անկումայնութիւնը, հոռետեսութիւնը, երբ փախուստի դիմածը թափառաշրջիկ կյանքի ընթացքում չի գտնում իր «էս»-ի ինքնահաստատումը նրա մեջ հոգեկան խաթարումների և վարքի շիզուման արտառոգ գործընթաց է տեղի ունենում:

Դեռահասի վարքի շեղումներից է սեքսուալութեան հզնաժամը, որը բացատրուիւմ է օրգանիզմում տեղի ունեցող կտրուկ փոփոխութիւններով, այսինքն մտածածին, երևակայական սեքսուալ զգացողութիւնները փոխարինուիւմ են բուռն սեքսուալ կյանքով (այդ թվում նաև խաթարված բնութիւն սեքսուալ հարաբերութիւններով): Դեռահասային բարդութիւն էութիւնը կազմում է տվյալ տարիքին բնորոշ, հատկանշական հոգեբանական առանձնահատկութիւններով, վարքային պատկերացումներով, յուրահատուկ վարքային ռեակցիաներով, որոնք ազդում են շրջապատող սոցիալական միջավայրի վրա: Այդպիսիք պայմանավորված են նաև ձևավորվող սեքսուալ հակումներով:

Դեռահասների բազմապիսի հակումների համակարգում որոշակի տեղ են զրավում, այսպէս կոչված մառնամանկանահն հակումները: Մառնամանկանային հակումների առանձնահատկութիւնները դեռահասների ու պատանիների շրջանում կոնկրետ զգայական են, որոնք իրենց «էս»-ի գնահատումը ստանում են հասակակիցների և հատկապէս ավագների ազդեցիկ հեղինակութիւնների կողմից:

Մառնամանկանային հակումները կապված են ֆիզիկական ուժը բարձրացնելու հետ, լինել ավելի ճարպիկ, ձեռք բերել արագաշարժութեան, ճարպկութեան որակական հատկանիշներ: Այդ նպատակով տղաներն ու աղջիկները սիրով պարապում են սպորտի տարբեր խմբակներում (ցավով պիտի նշել, որ մեր հանրապետութիւնում հետ է մնում մանկապատանեկան սպորտը):

Դեռահասների վարքում դրսևորվում են նաև լիդերային հակումներ: Դրանք կապված են այն իրավիճակների հետ, որտեղ կարելի է կանխապէս ղեկավարել ինչ որ կազմակերպութիւն, կազմակերպել ինչ որ միջոցառում, ուրիշներին ուղղել, հրահանգել, թելուզ այդ միջոցառումները լինեն կարճատև:

Տարբեր մարզածների պարապմունքներին հանձնարարված պարտականութիւնների կատարման ժամանակ, ակնհայտորեն նկատվում է առաջնորդելու, ղեկավարելու ձգտումը: Նման իրադրութիւններում ի հայտ են գալիս

մանկագաղտունեկան խմբերում առաջնորդներ, գլխավորներ, մեծահասակներ և որ դաստիարակը ուսուցիչը ուշադրություն բերի հաշվի առնի լիզերի առաջնորդի կազմակերպական ունակությունները, օժտվածությունը:

Դեռահասակների որոշ շեղումներ (կամակորոշում և այլն) կազմում են եսակենտրոն հսկումների հետ: Դեռահասակների շրջանում տարածված են նշանավոր հոգեբույժ Ջորջի Եսակենտրոն հսկումները դա կազմում է նաղգիսիզմը ինքնասիրահարվածության հետ: Ես գրում է «Եսոգիսիզմ տերմինը օգտագործվում է այնպիսի վիճակն արտահայտելու երբ մարդ սեփական մարմնին վերաբերում է ինչպես սեփական օբյեկտի, այսինքն հիանում է նրանով, սեքսուալ բավարարվածություն զգացումով, վաղաշուրժում է մինչև այն ժամանակ, երբ դրանից լրիվ բավարարվածություն է առնում»² Իրոք, այս տարիքում դեռահասակների շրջանում նկատելի է նաղգիսիզմը, ինքնասիրահարվածությունը, որ առանձին դեռահասակների, առանձնապես հաղեցատեր աղջիկների մեջ կարող է առաջացնել վարքի շեղումներ, սեփական «Ես»-ի գերաբեռնության բարդույթ:

Դեռահասակների (և ոչ միայն նրանց) վարքի որոշ շեղումներ կապված են ստրեսային և աֆեկտիվ հոգեվիճակների հետ, երբ նյարդային հոգեկան գերլարվածության պայմաններում թուլանում է գիտակցության վերահսկողությունը, և դեռահասը թույլ է տալիս բարոյական վարքին անհարիր արարքներ: Դոգերանական ուսումնասիրությունները (օրինակ հայ անվանի հոգեբան Ա. Լալաջյանի ուսումնասիրությունները) ցույց են տալիս, որ ստրեսը համալս գուցորդվում է Ֆրուստրացիայի հետ: Ասենք դեռահասակների մեջ Ֆրուստրացիոն հոգեվիճակ է առաջանում, երբ նրա նպատակների մեծք բերման ճանապարհին ծնողները կամ ուսուցիչները դժվար հաղթահարելի արգելքներ (ֆրուստրատորներ) են դնում: Ֆրուստրացիոն հոգեվիճակը ամենից առաջ աչքի է ընկնում տհաճ հույզերով, որոնք էլ տեղիք են տալիս անբավարարվածության, հիասթափության, գայության, հուսահատության և վարքի բացասական այլ հետևությունների: Դոգերան Ա. Լալաջյանը գրում է, որ «Ֆրուստրացիոն վիճակում գտնվող մարդիկ հանդես են բերում վարքի հատուկ պաշտպանական ձևեր (ընդգծումը իմն է Դ.Գ.), որոնց իրագործման համար օգտագործվում են սրտառվածական մեխանիզմներ»³:

Իհարկե, վերոհիշյալներով բնավ էլ չեն սպառվում դեռահասի վարքի բոլոր շեղումները, սակայն փոքրածախս սույն հոդվածում ներառված նյութերն էլ կարող են գործնական մեթոդական օգնություն ցույց տալ ծնողներին ու մանկավարժներին հաղթահարելու դեռահասակների վարքում դրսևորվող բազմապիսի շեղումները:

² З.Фрейд, Психология сексуальности, М., 1975, с. 76.

³ Դոգերանական բառարան, Երևան, «Լույս» հր., 1984, էջ 217.